

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/3

4 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Սոնա և Միքայել» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 06.10.2014 թ-ի թիվ 0268369 որոշման դեմ:

«Սոնա և Միքայել» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 06.10.2014 թ-ին կազմված վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 0268369 որոշումն անհիմն է հետևյալ պատճառներով.

Վիճարկվող որոշման մեջ նշվում է, որ «Սոնա և Միքայել» ՍՊԸ տնօրեն Արշակ էդուարդի Սմբատյանը (ք.Երևան, Արագածի փ., 1 տուն) 2014 թ-ի հուլիս ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկը «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետից ուշ է ներկայացրել հարկային տեսչություն:

Արարքը համապատասխանում է ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներին, և համապատասխանաբար Արշակ էդուարդի Սմբատյանին ենթարկել վարչական տուգանքի 20.000 (քսան հազար) դրամի չափով:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է «2. Հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ քացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել՝

2) եկամտային հարկի ամփոփ հաշվարկ, որտեղ ներառվում են տվյալ հարկային գործակալից եկամուտներ ստացող (բացառությամբ միայն պասիվ եկամուտներ ստացողի և Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձի) ֆիզիկական անձանց համար հաշվարկված (քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարված) եկամուտների, այդ եկամուտներից պահված եկամտային հարկի, իսկ սոցիալական վճարներ կատարող անձանց մասով՝ նաև հաշվարկված և պահված սոցիալական վճարների վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ սույն հոդվածի 2.1-ին մասով սահմանված դեպքերի»:

Համաձայն օրենքի եկամտային հարկի ամփոփ հաշվարկի ներկայացման համար տրվում է քսան օր, սակայն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (համաձայն որի պարտադիր կուտակային վճարը փոխարինվել է պարտադիր սոցիալական վճարով) 2014 թ-ի հուլիսի 1-ից ուժի մեջ մտնելու հետ կապված «Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկ»-ի (ձև ռ9) բացառապես էլեկտրոնային եղանակով ներկայացման ընթացքում առաջացել են տեխնիկական խնդիրներ, որոնք վերացել են միայն ս/թ օգոստոսի 19-ից: Ընկերության անօրենքը հաշվարկը կարողացել է ներկայացնել ս/թ սեպտեմբերի 1-ին:

Բացի այդ, Ա.Սմբատյանը տեղյակ է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի ծանուցմանը ՀՀ ՖՆ տարածքային (հարկային) տեսչությունների պետերին, համաձայն որի. «Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկի» ներկայացման օրենքով սահմանված ժամկետի ընթացքում տեխնիկական խնդիրների առկայության դեպքում հարկ վճարողների կողմից էլեկտրոնային եղանակով հաշվարկը չներկայացնելը չի առաջացնում ՎԻՎ օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն, քանի որ զանցակազմի սուբյեկտիվ կողմը՝ մեղքը, բացակայում է»:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը գտնում է, որ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ կողմից 06.10.2014 թ-ին կազմված վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 0268369 որոշումը հիմնավոր չէ, և խնդրում է առաջադրված վարչական տուգանքը՝ 20.000 դրամի չափով, ճանաչել անվավեր:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Սոնա և Միքայել» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից 2014 թ-ի հուլիս ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկը «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու համար ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 06.10.2014 թ-ի թիվ 0268369 որոշմամբ ընկերության տնօրենը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն «Հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել՝

...

2) եկամտային հարկի ամփոփ հաշվարկ, ... »:

Քննարկվող դեպքում «Սոնա և Միքայել» ՍՊԸ կողմից 2014 թ-ի հուլիս ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկը ներկայացվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետից ուշ, այն է՝ մինչև ս.թ. օգոստոսի 20 ներկայացվելու փոխարեն, այն ներկայացվել է միայն ս.թ. սեպտեմբերի 1-ին:

«Սոնա և Միքայել» ՍՊԸ ներկայացուցչին Հանձնաժողովի անդամների ուղղված հարցին, թե ինչու է վերոգրյալ հաշվարկը ներկայացվել սահմանված ժամկետից ուշ, հնչեց պատասխան, որ հաշվարկը ուշ ներկայացնելը պայմանավորված է եղել նրանով, որ ՀՀ ՖՆ համակարգում տեխնիկական խնդիրների առկայության հետևանքով եկամտային հարկի ամփոփ հաշվարկի համապատասխան ձևը տեղադրվել է միայն օգոստոսի 19-ին, երբ ընկերության հաշվետվություններ ներկայացնող համապատասխան անձը բացակայել է հանրապետությունից:

Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ ընկերության հաշվետվությունները ներկայացվում են իր կողմից, իր համակարգի միջոցով:

